քը··Եկաւ, ժողվեց, այդպէս անուանած, մը-տաւորականութիւնը, ճառեր արտասանեց, խոստումներ արաւ — «Էսպէս պիտի լինի, էն-պէս պիտի լինի»· յետոյ մի քանի հոգի գնա-ցինք իր սենեակը, սրանց էլ հայհոյեց, նրանց էլ հայհոյեց, պատկերաւոր անեկդոտներ պատ-մելով մինչեւ առաւօտ··· Դուրս եկաւ, որ հե-րոսը ինքն է· ինքը ամէն բան վաղուց հասկա-ցել էր, նախատեսել էր, բայց դու եկ տես, որ իրեն լսող չկայ:

Մի քանի օր յետոյ յոյների «Սիլոզոսում» ի պատիւ բանաստեղծին ցերեկոյթ սարքուե-ցաւ ու մէկը կարդաց Օշականի ճառը: Ձեռա-գիրը անընթեռնելի էր, քննադատականը սեղմ եւ անողոք: Մի ժամ տեւեց: Բանաստեղծը կը-րակի վրայ էր նստած: Պատասխանեց: Խօսեց անցեալի մասին, ապագայ յոյսերի, նսեմա-ցաւ, համեստութեան բուրվառներ ճօճեց եւ այլեւս «Արուստի Տան» մասին խօսք չարաւ:

Այդ օրուանից ի վեր Սիրունին հանգիստ չու-նի: Պատերազմի ամբողջ շրջանին սենեակի մէջ փակուած է մնացել, բնական է, այժմ շարժ-ուելու պահանջ է զգում: Ջսպասուած տոկու-նութիւն եւ յարատեւութիւն է գնում: Կուում է անթիւ, դուրսը մնացած, թշնամիների դէմ, հաշտեցնում է հակառակորդներին, մի քանի տգէտ եւ ինքնահաւան դերասանների ամբար-տաւանութիւնը մեղմացնում է: Երաժիշտների հետ խօսելու ձեւ է գտել, բանաստեղծների ա-կանջին ծածուկ բաներ է փսփսում, նկարիչնե-րին մեծ յոյսեր է ներշնչում, Կովկասից եկած խմաստակ արուեստագէտներին ներողամիտ ժպիտներ է բաշխում, բուրժուաների ակումբի հետ բարեկամական յարաբերութիւններ է մը-շակում: Մի խօսքով, չտեսնուած բաներ է ա-նում:

Սակայն, այստեղ եւս ամէն ինչ պանորա-միկ է, ամէն ինչ ներկայացում է եւ տեսարան: Ներքին բովանդակութիւնից զուրկ ենք: Փոր-ձեր եղան միութեան կէտ գտնել՝ ի զուր: Բա-ւականանում ենք թէյասեղաններով, ցոյցե-րով, թատերական ներկայացումներով:

Տօնում ենք Մոլիեռը: Ընդունելութիւն ենք անում Շառլ Դիլին: Տօնեցինք նաեւ Դուրեանի մահուան քսանհինգամեակի տարեդարձը:

Ինչպէս միշտ պատրիարքի ներկայու-թեամբ, թափօրով, բոյսկաուտներով շրջա-պատուած:

Լաւ էր:

Տօնը պիտի սկսուէր Դուրեանի դերեզմանի վրայ· ուստի, առաւօտ ուշ չմնալու համար, որոշուեց, որ «Արուստի Տան» կորիզը գիշերէ Սկիւտարում, Պէրպէրեան դպրոցում:

Նկարիչներ, երաժիշտներ, գրականագէտ-ներ ··· Պառկեցին դպրոցի մեծ ննջարանում, մանկութեան օրերը յիշեցին, կատակներ ա-րին, պատմութիւններ պատմեցին:

Առաւօտ գնացի, դեռ նոր էին հաղնւում: Զարաճիճի մէկը, ըստ աւանդական սովորու-թեան, զգեստները եւ կօշիկները փոխած էր: Նկարիչ Թէրլէմէզեանը փորձում էր մի շապիկ, որ փոքր էր· Սիւնին իր գուլպաներն էր որո-նում, մէկ ուրիշը իր կօշիկները: Ամէնքը լաւ տրամադրուած, ծիծաղում եւ կատակախօսու-թիւններ էին անում:

Յետոյ սկսուեց արարողական մասը: Պատ-րիարքը եկել էր պատարագ մատուցանելու եւ եկեղեցին լի էր: Դրօշակներ, պսակներ, երա-ժշտութիւն, թափօր, եւ փողոցի փողոց դէպի դերեզմանը: Շատ ժողովուրդ: Բոլոր սկիւ-տարցիները այստեղ էին, քաղաքից էլ շատ մարդ էր եկել: Ճառեր, արտասանութիւններ:

Կէսօրից յետոյ Պերա, Պըտիշանի թատրոն: Լեփ լեցուն: Ծափեր, ոգեւորութիւն: Ճառեր, արտասանութիւններ:

Գրերի գիւտի տօներից յետոյ չտեսնուած տեսարաններ:

Ցիշեցի խեղճ Զաւարեանին:

Դում Դափուի եկեղեցուց տուն էի վերա-դարձել Արնաուտքէոյ եւ շտապում էի նորից քաղաք· չգիտեմ ո՞ր հանդիպեցայ Զաւարեանին: Նաւի մէջ հանդիպեցայ Զաւարեանին: Ցուզուած էր, խիստ ջղայնացած: Զարմացայ եւ խօսք բացի տօների մասին: Սաստիկ զայրա-ցաւ.

«Տխմարները, հասկանո՞ւմ են ինչ են ա-նում: Այս ցոյցերին տաճիկները ջարդով մեզ պիտի պատասխանեն: Այո՛, ես զգում եմ, ես վստահ եմ, որ ջարդով պիտի պատասխանեն, երբ առաջին առիթը ներկայանայ··· Պատմու-թիւնը մեզի ոչինչ է սորվեցրել, մենք մեր պոռոտախօսութեան զոհը պիտի դառնանք»···

Եւ այդպէս ամբողջ ճանապարհի ընթացքին:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան